

պարտականը կրնայ ստիպել որ պարտքը վճարէ. որովհետեւ մէկը միւսին համար ամենեւին պարտական չէ հատուցում ընելու»:

Իշխանին յաջորդը, Աբաֆի Բ., աւելի պաշտպանութիւն ընծայեց հայերուն, ինչպէս ցոյց կուտայ Ֆակարաչի դղեակէն տրուած 1696 Փետր. 7 թուակիր հրովարտակ մը: Այս հրովարտակով պաշտպանելով հայոց լիուլի ազատութիւն կը տրուի երկրին մէջ բնակելու, առեւտուր ընելու, կրօնական պաշտամունքի եւ մասնաւոր քահանայի: Իրաւունք կը տրուի իրենց մէջէն ու իրենց համար դատաւոր մը ընտրելու, ոսնձգութեանց դէմ օրինական պաշտպանութիւն վայելելու, ճրի ծառայութեան եւ սուրհանդակի սպասարկութեան զերծ մնալու, իրենց շարքին ու փողոցին մէջ ոչ-հայերու բնակութիւնը արգելելու, մասցու կտրելու, ազատութիւն դնում ընելու, եւայլն:

Աբաֆի Բ.էն յետոյ Թրանսիլվանիա անցաւ Հապսուրկեան տան իշխանութեան ներքեւ: Պէտք է ըսել որ Հապսուրկեան կայսրերն ալ հայերուն շնորհեցին իրենց պաշտպանութիւնը, Լէօփօլա կայսրէն սկսեալ, որ, սակայն, Թրանսիլվանիա դադրած հայերը կաթոլիկութեան ծոցը մտցնելու համար շատ աշխատեցաւ:

Լէօփօլա կայսրն էր, որ 1700-ին, արտօնեց Աւքսենտիոս Վրդարեան արքեպիսկոպոսը հիմնելու Կեոլա հայաքաղաքը, որ յետոյ, 1714 Դեկտ. 14-ին հրատարակուած հրամանագրով մը դատական ինքնավարութեան իրաւունք կը ստանայ, զանազան շրջաններու մէջ ուրիշ արտօնութիւններ եւս ստանալով, — ինչպէս Կարօլոս Զ.ի կողմէ 1706 Մայիս 24-ին տրուած հրամանագիր մը «հայ խաղախորդներու եղբայրութեան» եւ անոր առանձնաշնորհումներուն մասին:

Նշխարէթուպօլիս եւս, որ հետզհետէ կը կեդրոնանար հոծ թիւով հայութիւն մը, վայելեց կայսրերու պաշտպանութիւնը, 1733 Օգոստոս 11-ին մանաւանդ ստանալով հրովարտակ մը Կարօլոս Զ. կայսրէն, որ Նշխարէթուպօլիսը կը հռչակէ հայաքաղաք, պարտք կը դնէ կառուցանել հայ կաթոլիկ եկեղեցի մը ենթակայ Թրանսիլվանիոյ լատին եպիսկոպոսին, եւ քաղաքը չընդունիլ «արեւելեան հերձ-

ուածող հայերը», քաղաքին կը շնորհէ պետական պաշտպանութիւն, կ'արտօնէ կաղմել ատեան մը՝ մէկ դատաւորէ եւ 12 խորհրդականէ բաղկացած, իրաւունք կուտայ ազատ առեւտուրի եւ ամբողջ երկրին մէջ եւ տնտեսական մասնակցելու, անտառ կտրելու, մասհատութեան եւ գինեվաճառութեան, եւ ի վերջոյ կը սահմանէ տուրքերը:

Կարօլոս Զ.ի տուած այս արտօնութիւնները յետոյ զանազան արգելքներու բախեցան, ու հայերը ստիպուեցան երկար դիմումներ կատարել Վիեննա՝ ձեռքէ չհանելու համար դանոնք: Մարիա Թէրէզա կայսրուհին 1758 Նոյեմբեր 28-ին տրուած հրովարտակով մը գրեթէ մեծ մասամբ կը հաստատէ զանոնք, տեղ տեղ շեշտելով սակայն թէ այդ արտօնութիւնները Թրանսիլվանիոյ մէջ բնակող միմիայն հռոմէական դաւանանք ունեցող հայոց համար են:

Հայերը չազատեցան սակայն իրենց նախանձորդներու ձեռքէն, եւ ստիպուեցան նոր դիմումներ կատարել Վիեննա, ենթարկուելով նաեւ այս առթիւ, ինչպէս ուրիշ անգամներ, դրամական տուրքերու եւ զոհողութեանց ալ: Այս նոր դիմումներուն արդիւնքը այն եղաւ որ Նօսէֆ կայսրը 1785 Յունուար 27-ին նոր հրովարտակ մը հրատարակեց հաստատելով Կարօլոս Զ.ի եւ Մարիա Թէրէզայի արտօնութիւնները, ի հեճուկս Մաճառներուն եւ Սաքսոններուն տալով նաեւ նոր արտօնութիւններ, ինչպէս՝ քաղաքն ու քաղաքացիները ազատ կացուցանելով իրենց գաւառին որեւէ իշխանութեանէն թէ՛ դատական, թէ՛ տնտեսական եւ թէ՛ քաղաքային գործունէութեանց մէջ, միմիայն արքունական վերին իշխանութեանէն կախում ունենալով, ասկէ դատ իրաւունք տալով հայերուն ընդունուիլ պետական պաշտօններու մէջ:

Գրեթէ կէս դար շարունակուեցաւ խուլ պայքարը հայոց եւ տեղացի ուրիշ տարրերու մէջեւ, եւ հայերը ի վերջոյ 1837 Օգոստ. 15-ին Ֆէրտինանտ կայսրէն ձեռք ձգեցին նոր հրովարտակ մը որ թէեւ արտաքուստ առանձնաշնորհումներ կուտար, բայց իրականին մէջ նախընթացներուն ընդարձակութիւնը կը սեղմէր եւ կը յապաւէր նոյնիսկ հին արտօնու-